



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

☒ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92

Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____ » _____ 2019 թ.

<<ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ >> ՀԿ-ի
<<ՀԵՏՔ>> ԹԵՐԹԻ ԼՐԱԳՐՈՂ
ԳՐԻՇԱ ԲԱԼԱՍԱՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 24.01.2019թ.-ի և 29.01.2019թ.-ի գրությունների

Հարգելի պարոն Բալասանյան

2018թվականին և 2019թվականին մարզպետարանի աշխատակիցների պարզևատրման վերաբերյալ իրավական ակտերը տեղադրված են մարզպետարանի <<Իրավական ակտեր>> բաժնի <<Մարզպետի կարգադրություններ>> և <<Գլխավոր քարտուղարի հրամաններ>> ենթաբաժնում: Միաժամանակ տեղեկացնում են, որ 2018թ. տարեվերջին աշխատավարձի ֆոնդում առկա տնտեսված միջոցների հաշվին աշխատակիցներին տրվել է պարզևատրում պաշտոնական դրույքաչափի 20-30 տոկոսի չափով:

Կից ներկայացվում է 2018թվականի և 2019թվականի գործուղման գումարների ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը՝ Ձեր կողմից ներկայացված հարցմանը համապատասխան: 2018թ. <<Ներքին գործուղումներ>> հոդվածով տարեվերջին ունեցել ենք 998.2 հազ. դրամ տնտեսում, որը վերադարձվել է պետական բյուջե:

Տեղեկացնում են, որ << Լոռու մարզպետի պաշտոնում նշանակվելուց ի վեր ես հրաժարվել եմ գործուղումների համար տրվող հատկացումներից: Միաժամանակ իմ կողմից սահմանվել է խիստ վերահսկողություն գործուղումների ուղղությունների ու օրերի նպատակային տրամադրման առումով:

Ի պատասխան Ձեր 29.01.2019թ.-ի գրության, տեղեկացնում են, որ մինչ այժմ 2017 թվականի մարզպետարանի աշխատակիցների պարզևատրման վերաբերյալ իրավական ակտերը մարզպետարանի պաշտոնական կայքում չեն տեղադրվել: Իմ կողմից հանձնարարական է տրվել պաշտոնական կայքում վերջին տարիներին տրված պարզևատրումների մասին իրավական ակտերը տեղադրելու մասին:

Ներկայումս 2017թվականին մարզպետարանի աշխատակիցների պարգևատրման վերաբերյալ իրավական ակտերը տեղադրված են մարզպետարանի <<Իրավական ակտեր>> բաժնի <<Մարզպետի կարգադրություններ>> և <<Գլխավոր քարտուղարի հրամաններ>> ենթաբաժնում:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ 2017թ. տարեվերջին աշխատավարձի ֆոնդում առկա տնտեսված միջոցների հաշվին աշխատակիցներին տրվել է պարգևատրում պաշտոնական դրույքաչափի 36-100 տոկոսի չափով:

 Invalid signature

X 

ԱՆՂԻՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Հարգանքով՝

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ